ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԳՀԱՊՁԲ-22-19/1-3

ք. Երևան 27.04. 2022թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ **պաշտպանության նախարարի տեղակալ Կ. Բրուտյանի**, ով գործում է է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ **«Գնորդ»**, մի կողմից, և «Ալֆա-Էտալոն» ՍՊԸ-ը, ի դեմս տնօրեն Կ. Մարկոսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ **«Վաճառող»** մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի,

2.1.8 Ստանալ ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.1.9 Ապրանքների ընդունման գործընթացն իրականացնել ՀՀ պաշտպանության նախարարի 22.02.2019թ. N 177 հրամանի պահանջների համաձայն (հրամանը հրապարակված է http://mil.am կայքի «Գրադարան բաժնի» ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՀՐԱՄԱՆՆԵՐ ենթաբաժնում):

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 **Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ մնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 5287320 (հինգ միլիոն երկու հարյուր ութսունյոթ հազար երեք հարյուր քսան) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և եռամսյակների: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է 15 բանկային օրվա ընթացքում, համապատասխան եռամսյակներում առկա միջոցների հաշվին, բայց ոչ ուշ, քան 15.12.2022թ:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում

էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[21]Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[22332]

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

---

21 Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:
Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

22 Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 11 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Սույն պայմանագրի շրջանակներում պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչությունը, իսկ կառուցվածքային ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՋՈՒ ԳՇ ռազմատեղագրական ծառայությունը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Ալֆա-Էտալոն» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Բագրևանդի 5	ՀՀ.ք. Երևան, Տիգրան Մեծ 29ա, բն. 37
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Էվոկաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 16600275473600
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 00454717
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	տնօրեն
Կ. ԲՐՈՒՏՅԱՆ	Կ. ՄԱՐԿՈՍՅԱՆ

Հավելված N 1
N ԳՀԱՊՁԲ-22-19/1-3 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Հ/Հ	Տեխնիկական հատկանիշը				
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագրերը
9	Sakura	Sakura	SACE310A	Sakura printing Co Ltd	HP CLJ 1025 գունավոր լազերային տպիչի քարտրիջ, սև՝ SACE310A
10	Sakura	Sakura	SACE311A	Sakura printing Co Ltd	HP CLJ 1025 գունավոր լազերային տպիչի քարտրիջ, կապույտ՝ SACE311A
11	Sakura	Sakura	SACE313A	Sakura printing Co Ltd	HP CLJ 1025 գունավոր լազերային տպիչի քարտրիջ, կարմիր՝ SACE313A
12	Sakura	Sakura	SACE312A	Sakura printing Co Ltd	HP CLJ 1025 գունավոր լազերային տպիչի քարտրիջ, դեղին՝ SACE312A
17	Sakura	Sakura	SA106R01634	Sakura printing Co Ltd	Xerox Phaser 6000 գունավոր լազերային տպիչի քարտրիջ, սև՝ SA106R01634
18	Sakura	Sakura	SA106R01631	Sakura printing Co Ltd	Xerox Phaser 6000 գունավոր լազերային տպիչի քարտրիջ, կապույտ՝ SA106R01631
19	Sakura	Sakura	SA106R01632	Sakura printing Co Ltd	Xerox Phaser 6000 գունավոր լազերային տպիչի քարտրիջ, կարմիր՝ SA106R01632
20	Sakura	Sakura	SA106R01633	Sakura printing Co Ltd	Xerox Phaser 6000 գունավոր լազերային տպիչի քարտրիջ, դեղին՝ SA106R01633
21	Sakura	Sakura	SACE285A/CB435A/436A/725	Sakura printing Co Ltd	Canon LBP 6030W շարքի տպիչ սարքի տոներ-քարտրիջ՝ SACE285A/CB435A/436A/725
22	HP	HP	CH565A	HP Inc.	HP DJ 510 մակնիշի պլոտեր սարքի քարտրիջ, սև՝ HP 82 (CH565A), ծավալը՝ 69 մլ:
23	HP	HP	C4911A	HP Inc.	HP DJ 510 մակնիշի պլոտեր սարքի քարտրիջ, կապույտ՝ HP 82 (C4911A), ծավալը՝ 69 մլ:
24	HP	HP	C4912A	HP Inc.	HP DJ 510 մակնիշի պլոտեր սարքի քարտրիջ, կարմիր՝ HP 82 (C4912A), ծավալը՝ 69 մլ:
25	HP	HP	C4913A	HP Inc.	HP DJ 510 մակնիշի պլոտեր սարքի քարտրիջ, դեղին՝ HP 82 (C4913A), ծավալը՝ 69 մլ:
26	HP	HP	CZ133A	HP Inc.	HP DJ T520 մակնիշի պլոտեր սարքի քարտրիջ, սև՝ CZ133A HP 711, ծավալը՝ 80մլ:
27	HP	HP	CZ130A	HP Inc.	HP DJ T520 մակնիշի պլոտեր սարքի քարտրիջ, կապույտ՝ CZ130A HP 711, ծավալը՝ 29մլ:
28	HP	HP	CZ131A	HP Inc.	HP DJ T520 մակնիշի պլոտեր սարքի քարտրիջ, կարմիր՝ CZ131A HP 711, ծավալը՝ 29մլ:
29	HP	HP	CZ132A	HP Inc.	HP DJ T520 մակնիշի պլոտեր սարքի քարտրիջ, դեղին՝ CZ132A HP 711, ծավալը՝ 29մլ:
31	HP	HP	HP C9403A	HP Inc.	HP T790 մակնիշի պլոտեր սարքի քարտրիջ, անփայլ սև՝ HP C9403A, ծավալը՝ 130 մլ:
32	HP	HP	HP C9374A	HP Inc.	HP T790 մակնիշի պլոտեր սարքի քարտրիջ, մոխրագույն՝ HP C9374A, ծավալը՝ 130 մլ:
33	HP	HP	HP C9371A	HP Inc.	HP T790 մակնիշի պլոտեր սարքի քարտրիջ, կապույտ՝ HP C9371A, ծավալը՝ 130 մլ:
34	HP	HP	HP C9372A	HP Inc.	HP T790 մակնիշի պլոտեր սարքի քարտրիջ, կարմիր՝ HP C9372A, ծավալը՝ 130 մլ:
35	HP	HP	HP C9373A	HP Inc.	HP T790 մակնիշի պլոտեր սարքի քարտրիջ, դեղին՝ HP C9373A, ծավալը՝ 130 մլ:
47	Canon	Canon	6704B001AA	Canon Inc.	Քարթրիջներ Canon IPF 670 պլոտեր սարքի, անփայլ սև՝ 6704B001AA կամ համարժեք:
48	Canon	Canon	6705B001AA	Canon Inc.	Քարթրիջներ Canon IPF 670 պլոտեր սարքի, սև՝ 6705B001AA
49	Canon	Canon	6707B001AA	Canon Inc.	Քարթրիջներ Canon IPF 670 պլոտեր սարքի, կարմիր՝ 6707B001AA
50	Canon	Canon	6706B001AA	Canon Inc.	Քարթրիջներ Canon IPF 670 պլոտեր սարքի, կապույտ՝ 6706B001AA
51	Canon	Canon	6708B001AA	Canon Inc.	Քարթրիջներ Canon IPF 670 պլոտեր սարքի, դեղին՝ 6708B001AA
59	HP	HP	CE018A	HP Inc.	HP DJ Z6600 բաներային պլոտեր սարքի տպող գլխիկներ, կարմիր/դեղին՝ CE018A HP 771 Magenta/Yellow

Հ/Հ	Տեխնիկական հատկանիշը				
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագրերը
60	HP	HP	CE020A	HP Inc.	HP DJ Z6600 բաներային պլոտեր սարքի տպող գլխիկներ, փայլուն ֆոտո սև/մոխրագույն՝ CE020A HP 771 Photo Black/Light Gray
61	HP	HP	C1Q20A	HP Inc.	HP DJ Z6600 բաներային պլոտեր սարքի տպող գլխիկներ, անփայլ սև/կապույտ՝ C1Q20A HP 773 Matte Black/Cyan

Ծանոթություն.

- ցանկի 22-ից 61-րդ անվանատողերի համար՝ մասնակցի կողմից ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացումը պարտադիր է, իսկ մատակարարման փուլում՝ անհրաժեշտ է ներկայացնել առաջարկվող ապրանքների արտադրողի (MAF - Manufacturer's Authorization Form) կամ նրա կողմից Հայաստանի Հանրապետությունում լիազորված կազմակերպության (դիստրիբյուտորի) անունից (DAF - Distributer's Authorization Form) երաշխիքային նամակ-լիազորագիր,
- ցանկի 9-ից 61-րդ անվանատողերի ապրանքների պիտանելիության ժամկետը՝ առնվազն 1 տարի՝ մատակարարման օրվանից,
- ցանկում նշված ապրանքները պետք է լինեն նոր և չօգտագործված,
- ցանկում նշված ապրանքները պետք է մատակարարվեն Երևան, Բագրևանդի-5 հասցեով գտնվող պահեստ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«Ալֆա-Էտալոն» ՍՊԸ
տնօրեն

Կ. ՍԱՐԿՈՍՅԱՆ

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Գնման առարկայի						
Հ/հ	անվանումը	Հ/մ	քանակը	միավորի գինը (ՀՀ դրամ)	ընդհանուր գումարը (ՀՀ դրամ)	Ապրանքների մատակարարումը 2022թ. 2-րդ եռամսյակ
9	քարտրիջներ /Քարթրիջներ գունավոր HP CLJ 1025 լազերային տպիչի, սև/	հատ	4	3900	15600	4
10	քարտրիջներ /Քարթրիջներ գունավոր HP CLJ 1025 լազերային տպիչի, կապույտ/	հատ	4	3900	15600	4
11	քարտրիջներ /Քարթրիջներ գունավոր HP CLJ 1025 լազերային տպիչի, կարմիր/	հատ	4	3900	15600	4
12	քարտրիջներ /Քարթրիջներ գունավոր HP CLJ 1025 լազերային տպիչի, դեղին/	հատ	4	3900	15600	4
17	քարտրիջներ /Քարթրիջներ գունավոր Xerox Phaser 6000 լազերային տպիչի, սև/	հատ	4	3000	12000	4
18	քարտրիջներ /Քարթրիջներ գունավոր Xerox Phaser 6000 լազերային տպիչի, կապույտ/	հատ	4	3000	12000	4
19	քարտրիջներ /Քարթրիջներ գունավոր Xerox Phaser 6000 լազերային տպիչի, կարմիր/	հատ	4	3000	12000	4
20	քարտրիջներ /Քարթրիջներ գունավոր Xerox Phaser 6000 լազերային տպիչի, դեղին/	հատ	4	3000	12000	4

21	քարտրիջներ /Տոներ-քարթրիջներ Canon LBP 6030W շարքի տպիչ սարքերի/	հատ	8	3450	27600	8
22	քարտրիջներ /Քարթրիջներ HP DJ 510 պլոտեր սարքի, սև/	հատ	10	39900	399000	10
23	քարտրիջներ /Քարթրիջներ HP DJ 510 պլոտեր սարքի, կապույտ/	հատ	8	39900	319200	8
24	քարտրիջներ /Քարթրիջներ HP DJ 510 պլոտեր սարքի, կարմիր/	հատ	12	39900	478800	12
25	քարտրիջներ /Քարթրիջներ HP DJ 510 պլոտեր սարքի, դեղին/	հատ	17	39900	678300	17
26	քարտրիջներ /Քարթրիջներ HP DJ 520 պլոտեր սարքի, սև/	հատ	10	44880	448800	10
27	քարտրիջներ /Քարթրիջներ HP DJ 520 պլոտեր սարքի, կապույտ/	հատ	9	29880	268920	9
28	քարտրիջներ /Քարթրիջներ HP DJ 520 պլոտեր սարքի, կարմիր/	հատ	10	29880	298800	10
29	քարտրիջներ /Քարթրիջներ HP DJ 520 պլոտեր սարքի, դեղին/	հատ	20	29880	597600	20
31	քարտրիջներ /Քարթրիջներ HP T790 պլոտեր սարքի, անփայլ սև/	հատ	2	74880	149760	2
32	քարտրիջներ /Քարթրիջներ HP T790 պլոտեր սարքի, մոխրագույն/	հատ	2	54900	109800	2
33	քարտրիջներ /Քարթրիջներ HP T790 պլոտեր սարքի, կապույտ/	հատ	2	54900	109800	2
34	քարտրիջներ /Քարթրիջներ HP T790 պլոտեր սարքի, կարմիր/	հատ	2	54900	109800	2
35	քարտրիջներ /Քարթրիջներ HP T790 պլոտեր սարքի, դեղին/	հատ	4	54900	219600	4
47	քարտրիջներ /Քարթրիջներ Canon IPF 670 պլոտեր սարքի, անփայլ սև /	հատ	4	39750	159000	4
48	քարտրիջներ /Քարթրիջներ Canon IPF 670 պլոտեր սարքի, սև /	հատ	2	39750	79500	2
49	քարտրիջներ /Քարթրիջներ Canon IPF 670 պլոտեր սարքի, կարմիր/	հատ	2	39750	79500	2
50	քարտրիջներ /Քարթրիջներ Canon IPF 670 պլոտեր սարքի, կապույտ/	հատ	2	39750	79500	2
51	քարտրիջներ /Քարթրիջներ Canon IPF 670 պլոտեր սարքի, դեղին/	հատ	4	39750	159000	4
59	քարտրիջներ /Գլխիկներ HP DJ Z6600 բաներային պլոտեր սարքի, կարմիր/դեղին/	հատ	1	134880	134880	1
60	քարտրիջներ /Գլխիկներ HP DJ Z6600 բաներային պլոտեր սարքի, փայլուն ֆոտո սև/մոխրագույն/	հատ	1	134880	134880	1
61	քարտրիջներ /Գլխիկներ HP DJ Z6600 բաներային պլոտեր սարքի, անփայլ սև/կապույտ/	հատ	1	134880	134880	1

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Ա. ԲՐՈՒՏՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«Ալֆա-Էտալոն» ՍՊԸ
տնօրեն

Կ. ԹԱՐԿՈՍՅԱՆ

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-22-19/1-3 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Գնման առարկայի			Նախատեսվում է ֆինանսավորել 2022թ. ըստ եռամսյակների, բայց ոչ ուշ, քան 15.12.2022թ., ընդ որում՝		
ՀՀ	անվանումը	CPV կոդը	2-րդ	3-րդ	4-րդ
9	քարտրիջներ /Քարթրիջներ գունավոր HP CLJ 1025 լազերային տպիչի, սև/	30121500/9	15600	15600	15600
10	քարտրիջներ /Քարթրիջներ գունավոր HP CLJ 1025 լազերային տպիչի, կապույտ/	30121500/10	15600	15600	15600
11	քարտրիջներ /Քարթրիջներ գունավոր HP CLJ 1025 լազերային տպիչի, կարմիր/	30121500/11	15600	15600	15600
12	քարտրիջներ /Քարթրիջներ գունավոր HP CLJ 1025 լազերային տպիչի, դեղին/	30121500/12	15600	15600	15600
17	քարտրիջներ /Քարթրիջներ գունավոր Xerox Phaser 6000 լազերային տպիչի, սև/	30121500/17	12000	12000	12000
18	քարտրիջներ /Քարթրիջներ գունավոր Xerox Phaser 6000 լազերային տպիչի, կապույտ/	30121500/18	12000	12000	12000
19	քարտրիջներ /Քարթրիջներ գունավոր Xerox Phaser 6000 լազերային տպիչի, կարմիր/	30121500/19	12000	12000	12000
20	քարտրիջներ /Քարթրիջներ գունավոր Xerox Phaser 6000 լազերային տպիչի, դեղին/	30121500/20	12000	12000	12000
21	քարտրիջներ /Տոներ-քարթրիջներ Canon LBP 6030W շարքի տպիչ սարքերի/	30121500/21	27600	27600	27600
22	քարտրիջներ /Քարթրիջներ HP DJ 510 պլոտեր սարքի, սև/	30121500/22	399000	399000	399000
23	քարտրիջներ /Քարթրիջներ HP DJ 510 պլոտեր սարքի, կապույտ/	30121500/23	319200	319200	319200
24	քարտրիջներ /Քարթրիջներ HP DJ 510 պլոտեր սարքի, կարմիր/	30121500/24	478800	478800	478800
25	քարտրիջներ /Քարթրիջներ HP DJ 510 պլոտեր սարքի, դեղին/	30121500/25	678300	678300	678300
26	քարտրիջներ /Քարթրիջներ HP DJ 520 պլոտեր սարքի, սև/	30121500/26	448800	448800	448800
27	քարտրիջներ /Քարթրիջներ HP DJ 520 պլոտեր սարքի, կապույտ/	30121500/27	268920	268920	268920
28	քարտրիջներ /Քարթրիջներ HP DJ 520 պլոտեր սարքի, կարմիր/	30121500/28	298800	298800	298800
29	քարտրիջներ /Քարթրիջներ HP DJ 520 պլոտեր սարքի, դեղին/	30121500/29	597600	597600	597600
31	քարտրիջներ /Քարթրիջներ HP T790 պլոտեր սարքի, անփայլ սև/	30121500/31	149760	149760	149760
32	քարտրիջներ /Քարթրիջներ HP T790 պլոտեր սարքի, մոխրագույն/	30121500/32	109800	109800	109800
33	քարտրիջներ /Քարթրիջներ HP T790 պլոտեր սարքի, կապույտ/	30121500/33	109800	109800	109800
34	քարտրիջներ /Քարթրիջներ HP T790 պլոտեր սարքի, կարմիր/	30121500/34	109800	109800	109800
35	քարտրիջներ /Քարթրիջներ HP T790 պլոտեր սարքի, դեղին/	30121500/35	219600	219600	219600
47	քարտրիջներ /Քարթրիջներ Canon IPF 670 պլոտեր սարքի, անփայլ սև /	30121500/47	159000	159000	159000
48	քարտրիջներ /Քարթրիջներ Canon IPF 670 պլոտեր սարքի, սև /	30121500/48	79500	79500	79500

49	քարտրիջներ /Քարթրիջներ Canon IPF 670 պլոտեր սարքի, կարմիր/	30121500/49	79500	79500	79500
50	քարտրիջներ /Քարթրիջներ Canon IPF 670 պլոտեր սարքի, կապույտ/	30121500/50	79500	79500	79500
51	քարտրիջներ /Քարթրիջներ Canon IPF 670 պլոտեր սարքի, դեղին/	30121500/51	159000	159000	159000
59	քարտրիջներ /Գլխիկներ HP DJ Z6600 բաներային պլոտեր սարքի, կարմիր/դեղին/	30121500/59	134880	134880	134880
60	քարտրիջներ /Գլխիկներ HP DJ Z6600 բաներային պլոտեր սարքի, փայլուն ֆոտո սև/մոխրագույն/	30121500/60	134880	134880	134880
61	քարտրիջներ /Գլխիկներ HP DJ Z6600 բաներային պլոտեր սարքի, անփայլ սև/կապույտ/	30121500/61	134880	134880	134880

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«Ալֆա-Էտալոն» ՍՊԸ
տնօրեն

Կ. ԷԱՐԿՈՍՅԱՆ

Հավելված N 3
N ԳՀԱՊՁԲ-22-19/1-3 պայմանագրի

Պայմանագրի կողմ

_____

_____

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

Պատվիրատու

_____

_____

գտնվելու վայրը _____
հհ_____
հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Ապրանքը ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Հավելված 3.1
N ԳՀԱՊՁԲ-22-19/1-3 պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց **Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____ _____
ազգանուն, անուն ազգանուն, անուն

_____ _____
Ստորագրություն ստորագրություն